

Հայաստանի առաջին ռեսուրսն իր ժողովուրդն է

Լավ գաղափարներ առաջ քաշեցիք: Մեր առաջնորդների կատարած գործերը հրաշալի գործեր են, բայց առանց ընդհանուր ծրագրի, առանց ընդհանուր նպատակների՝ մենք վտանգի մեջ ենք, և դա կվնասի մեզ իբրև ազգ, իբրև երկիր: Այդ վտանգը եկող 10 տարիների ընթացքում մեզ կկործանի ու կբնաջնջի: Դրա համար կուզեի ձեզ պատմել մեր գաղափարների մասին: Անհրաժեշտ է որոշ քայլեր ձեռնարկել իբրև ազգ, իբրև ժողովուրդ և դժբախտաբար այդ քայլերը քարոզելով չեն իրագործվի: Պետք է մենք առաջնորդներ փնտրենք և այդ առաջնորդների միջոցով մեր գործերը կյանքի կոչենք:

Անվիճելի է, Հայաստանի և մեր ժողովրդի ամենակարևոր ռեսուրսը հաջորդ (երիտասարդ, նոր) սերունդն է, առանց որի մենք չենք կարող հաջողության հասնել, որովհետև որքան էլ որ մենք առողջ լինենք, մեզ քիչ ժամանակ է մնացել: Դա վստահաբար այդպես է: Դրա համար պետք է գալիք սերնդին այնպես նախապատրաստենք, որ ոչ թե միայն աշխատասիրությամբ հաջորդ քայլերն անի, այլ խելացի, աշխատասեր լինի: Աշխատասիրությունը բավարար չէ, կարևոր է, բայց բավարար չէ: Դրա համար մենք, որպես Հայաստանի մանուկների հիմնադրամի աշխատակիցներ նկատել ենք, որ հայերի նոր սերնդի կեսը բնակվում է գյուղերում, ուստի ուզում եմ Ձեզ հարցնել՝ քանի հոգի է Ձեզանից գնացել գյուղ և հետաքրքրվել գյուղի իրականությամբ (խնդիրներով), խնդրում եմ՝ այդպիսիք ձեռք բարձրացնեն: Փոքրիկ տոկոս:

Եթե խոսենք գյուղերի մասին, ապա, ըստ սփյուռքի և Հայաստանի առաջնորդների, գյուղերի բնակչությունը և երիտասարդ սերունդը անգետ է, բայց ես և իմ կազմակերպությունը 14 տարի է, ինչ գյուղերի հետ ենք աշխատում և շատ լուրջ ենք աշխատում: Օրինակ, ես տարին նվազագույնը 4 - 6 անգամ Հայաստան եմ այցելում և ամեն անգամ գյուղ եմ գնում՝ մեր գործերին հետևելու համար: Ես նկատել եմ, որ գյուղի բնակչությունը, երիտասարդությունը ավելի ունակ է, ավելի մեծ ցանկություն ունի զարգանալու, քան մեր հայերի մեծամասնությունը: Այսպիսով, մենք սկսեցինք ծավալել մեր գործունեությունը գյուղերում:

Մեր նպատակը հետևյալն է՝ հնարավորություն տալ երիտասարդներին, որ նրանք կարողանան կերտել իրենց ապագան, այլ ոչ թե մենք նրանց մուրացկանության վարժեցնենք՝ ամեն անգամ նրանց դրամ տալով: Այդպես չի լինի: Պետք է նրանց հնարավորություն տալ որ իրենք կարողանան որոշել իրենց ապագան, որովհետև ճիշտ չէ, որ մենք որոշենք նրենց փոխարեն: Մա կարևոր հարց է:

Օրինակ, երբ ես 2003թ. առաջին անգամ այցելեցի Քարակերտ գյուղ, ժողով հրավիրեցինք: Ես ասացի, որ որոշ չափով ծանոթ եմ Ամերիկայի ապրելակերպին,

սակայն նրանց ապրելակերպին ծանոթ չեմ, ուստի ուզում եմ հարցնել, թե նրանք ինչին են տալիս առաջնահերթությունը: Այսպես սկսեցինք աշխատել:

Ես ուզում էի, որ մեր աշխատանքները բարձր մակարդակով կատարվեն, իսկ դրա համար նախ անհրաժեշտ էր մեր աշխատողներին վերապատրաստել, որպեսզի նրանք մասնագետ դառնան:

Երևանում մենք ունենք 35 արհեստավարժ աշխատողներ, որոնք գրեթե ամեն օր գյուղ են այցելում, և, որ ավելի կարևոր է, գյուղերում ունենք 150 աշխատողներ, որոնք վերապատրաստվել են մեր կողմից՝ տարբեր գործեր կատարելու համար, և այժմ խոսում են դրա մասին:

Մեր բոլոր գործընկերները՝ համաաշխարհային և սեփական ընկերությունները, մասնակցում են այս գործին, որի համար շատ հպարտ ենք: Արդեն բացատրեցի, թե ինչու է պետք աշխատել գյուղերում, քանի որ մեր ազգը շատ զարգացած ազգ է և առաջնահերթությունը տալիս է ուսմանը, սակայն, դժբախտաբար, անցած 100 տարիների ընթացքում մեր հայ ազգը շատ դժվարություններ է ունեցել՝ եղեռն, ազգամիջյան ջարդեր, երկրաշարժ, հետո անկախության դժվարին տարիներ: Սկիզբը դժվար էր, մենք կառավարելու հմտություն չունեինք, իբրև ազգ՝ դա մեզ համար նորություն էր, պատերազմն էլ մյուս կողմից էր խանգարում: Եվ այս ամենը վերջին 100 տարիների ընթացքում:

Այժմ, երբ դժվարությունները փոքր ինչ ետևում են մնացել, պետք է հետևենք, որ հաջորդ 10 տարիների ընթացքում լուրջ փոփոխություններ իրականացնենք, որովհետև եթե անենք նույն քայլերը, ինչ որ արել ենք վերջին 10 - 40 տարիների ընթացքում, վստահ եմ, որ որպես ազգ հաջողությունների չենք կարող հասնել:

Մեր ամենակարևոր խնդիրը ուսումն է, բայց ուսումը բավարար չէ որովհետև, ինչպես նկատեցինք, գյուղերում շատ դժվարություններ կան՝ առողջապահական, բժշկական, գիտական, սոցիալական և տնտեսական: Մենք այս պայմաններում ենք աշխատում, և այսօր էլ 150 աշխատող ունենք գյուղերում, 35 էլ՝ Երևանում :

Մարդիկ կարծում են, որ միայն դպրոց նորոգելով՝ գործը առաջ կգնա, սակայն այդպես չէ: Պետք է նրանց սովորեցնենք, որ ուսումնական գործընթացի կազմակերպումը նաև ենթադրում է տնօրենների, ուսուցիչների վերապատրաստում, ինչը մենք անում ենք: Մեր կազմակերպությունը վերապատրաստում է նաև բժիշկների, սոցիալական աշխատողների և այլն:

13-14 տարվա ընթացքում ծախսել ենք 30 մլն, աշխատանքներ ենք ծավալել 44 գյուղում (դա 67 հազար մարդ է), բայց դա բավարար չէ, որովհետև Հայաստանն ունի 1000 գյուղ: Եթե ասենք, որ կփորձենք ավելի լավ աշխատել և հաջորդ 10 տարիների ընթացքում ևս 100 գյուղում աշխատանքներ ծավալել, դա էլ բավարար չէ: Դրա համար

մենք սկսել ենք նոր մոդել: Հավանաբար Ձեզանից շատերը լսել են դրա մասին: Մենք ջանքեր ենք ներդնում մեր կատարած աշխատանքները ևս 1000 գյուղերում տարածելու ուղղությամբ:

Այդ գաղափարը հայտնի է իբրև «Smart centre»: Արդեն ասել եմ, որ միայն շատ աշխատելով և աշխատասիրությամբ գործը գլուխ չի գա, պետք է խելացի ձևով աշխատենք, որպեսզի գործը ստացվի: «Smart center»-ի գաղափարն այն է, որ տեխնոլոգիաներ օգտագործենք, որպեսզի մեր 13 տարիների ընթացքում կատարած աշխատանքները՝ կապված ուսման, առողջապահության, սոցիալական և տնտեսական ոլորտների հետ, շարունակվեն: Ի դեպ տեխնոլոգիան մեզ կօգնի, որպեսզի Հայաստանի գյուղերը կապենք իրար և աշխարհի հետ:

Հայաստանում ընդհանուր առմամբ 20 «Smart centre»-ների առկայության դեպքում Հայաստանի գյուղերի խնդիրները կլուծվեն: Սա 10 տարվա նախագիծ է և կարժենա 200 մլն դոլար: Այդ 200 մլն-ով կփրկենք Հայաստանի գյուղերի բնակչությանը, և եթե դա մեզ հաջողվի, ապա կարելի է այս մոդելը կրկնել ամբողջ աշխարհում, որտեղ դրա կարիքը լինի:

Շնորհակալություն:

Գարո Արմեն

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հիմնադիր, խորհրդի ատենապետ